ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Ք.Երևան 12-ը փետրվարի 2018թ.,

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Ղազարյան/ԳԱ/

Անդամներ՝ Ց.Ակոպյան/ԳԱ/

Գ. Թամրազյան/ԲԱ/

Մ.Մանուկյան /ԳԱ/

Լ. Մարգարյան/ԲԱ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ.Ապրիկյան

1. «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի շրջանակներում «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին

1.1 «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին **«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի** համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ , որոնք արձանագրվել էին հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ և նշված անհամապատասխանությունների վերաբերյալ «ԵՊԼՀ» հիմնադրամը գրությամբ դիմել էր ՀՀ ֆինանսների նախարարություն պարզաբանում ստանալու նպատակով ՝

ՀՀ ֆինանսների նախարարությանից ստացված պարզաբանման մեջ նշվել է, որ «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հայտ է ներկայացրել 10.01.2018թ., մինչդեռ Ընկերության՝ «ՍՈՍ Աուդիտ» ՍՊԸ-ի իրավահաջորդ լինելու վերաբերյալ գրառումը կատարվել է 11.01.2018թ., այսինքն հայտը ներկայացնելուց հետո :

Հարկ է նկատի ունենալ,որ «ՍՈՍ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից կնքված և կատարված պայմանագիրը «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի համար չի կարող դիտվել «Մասնագիտական փորձառություն» չափանիշով որպես նախորդ 3 տարիների ընթացքում կատարված նմանատիպ պայմանագիր՝նկատի ունենալով , որ իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձի միանալու դեպքում միացած իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն են անցնում վերջինիս՝փոխանցման ակտին համապատասխան: Մինչդեռ տվյալ իրավաբանական անձի կողմից կատարված պայմանագիրը և դրա

հիման վրա ձեռք բերված «Մասնագիտական փորձառությունը» բնութագրում է անմիջականորեն պայմանագիրը կատարած իրավաբանական անձին և չի հանդիսանում իրավունք կամ պարտակաություն, ուստի չի կարող փոխանցվել իրավահաջորդության կարգով:

1.2 Ուստի **«*ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01*» ծածկագրով** գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պարզաբանումը գտնում է, որ **«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ն** չի բավարարում հրավերով նախատեսված որակավորման պահանջները:

Հանձնաժողոովը որոշեց մերժել **«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ**-ի հայտը:

1.3 «*ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01*» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել հաջորդ տեղը զբաղեցրած **«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ**-ին և վերջինիս առաջարկել ներկայացնելու ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.4 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ **«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ**-ի ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնելու մասին

2.1 . Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը՝ ժամը 11:00-ին, «Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամում, ք.Երևան, Թումանյան 42 հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5 , դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Հ. Ղազարյան/ԳԱ/

Անդամներ՝ ---------- Ց.Ակոպյան/ԳԱ/

---------- Գ. Թամրազյան/ԲԱ/

---------- Մ.Մանուկյան /ԳԱ/

---------- Լ. Մարգարյան/ԲԱ/

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Գ.Ապրիկյան